

ԱՍՏՆ ԴՐՔՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄԿԱԶՄԱՎՈՐՎՈՂ ԳՐԱԿԱՆ ՔՐԴԵՐՆԵՐԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՈՃԻ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՅԵՐԻ ՇՈՒՐՋ

Գրական քրդերենի գեղարվեստական ոճը ձևավորման ու հարստացման լայն հնարավորություններ ձեռք բերեց և զարգացման նշանակալից աստիճանի հասավ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո՝ իր կայուն դիրքը հաստատելով գրական լեզվի մնացած երեք՝ հրապարակախոսական, պաշտոնական և գիտական ոճերի շարքում¹։ Լեզվանյութի ոճական ու քերականական միջոցների ընդարձակ հնարավորությունների առկայության պայմաններում այն մեծ է չափազանց կարևոր դեր է կատարում մյուս ոճերի հարստացման, դրանց փոխհարաբերությունների աշխուժացման, հստակեցման ու ծավալման գործում՝ նպաստելով գրական լեզվի ամբողջական կազմավորմանն ու զարգացմանը։ Նրա կազմավորման համար անսպառ աղբյուր են հանդիսացել ու հանդիսանում այսօր, նախ և առաջ, առօրյա խոսակցական լեզվի ու ժողովրդական բանահյուսության բազմատեսակ ժանրերը, նրանց բազմաբովանդակ հարուստ լեզվանյութը, պատկերավոր մտածելակերպի միջոցներն ու հնարավորությունները։ Գեղարվեստական ոճի կազմավորմանն ու նշանակալի զարգացմանը շարունակում է նպաստել նաև թարգմանչական գրականությունը, որի բացառիկ դերը նրա հարստացման ու մշակման գործում կայանում է ոչ միայն լեզվի հարուստ քառապաշարի, քերականական ու ոճական միջոցների ամբողջ բազմազանության լայն ներգրավման ու կիրառման մեջ. այլ նաև նրան բազմազան նոր ոճական միջոցների ու պատկերավոր գեղարվեստական մտածելակերպի նոր հնարավորություններ փոխանցելու ուղղությամբ։ Հայ և ռուս դասական ու ժամանակակից գրականության բարձրարժեք նմուշների քրդերեն լեզվով թարգմանությունները, մասնավորապես, Խ. Արովյանի «Վերք Հայաստանի» վեպից հատվածներ (թարգմ. Հ. Ջնդիի)², Հով. Թումանյանի «Գիքոր» (թարգմ. Ա. Ավդալի, Հ. Ջնդիի), «Անուշ» պոեմը (թարգմ. Դրամբյանի)³, Մ. Նալբանդյանի «Ազատություն» բանաստեղծությունը (թարգմ. Հ. Ջնդիի)⁴, «Մանկության օրեր» բանաստեղծությունը (թարգմ. Մ. Ասադի)⁵, Հակոբյանի «Մեկ էլ, մեկ էլ» բանաստեղծությունը (թարգմ. Ռ. Դրամբյա-

նի)⁶. հեղափոխության մեծ երգիչ Չարենցի «Ընկերներ», «Համայնական արտերի սերմնացաններ», «Լենինն ու Ալին» (թարգմ. Ա. Ավդալի)⁷, Հմ. Սիրասի «Ասմար», «Կյանքի կարոտ» (թարգմ. Ա. Ավդալի, Ջարդոն Գենցոյի)⁸, Հրաչյա Քոչարի «Խաջե» վիպակը (թարգմ. Հ. Ջնդիի)⁹, Սարմենի «Լաթիֆե» պոեմը (թարգմ. Հ. Ջնդիի)¹⁰, Ավ. Իսահակյանի «Քուրդ Ամոն» (թարգմ. Հ. Ջնդիի)¹¹, Դ. Դեմիրճյանի «Արդուլը» (թարգմ. Ա. Ավդալի)¹², Հ. Ղազարյանի «Քուրդ Ամոյի պատմությունը» (թարգմ. Հ. Ջնդի ու Ա. Ավդալի)¹³, Գորկու «Երգ արծվի մասին» (թարգմ. Ղաչաղե Մրադի), Լերմոնտովի «Փախստական» (թարգմ. Շկոե Հասանի), Լ. Ն. Տոլստոյի «Կռվկասի գերին» (թարգմ. Ղաչաղե Մուրադի), Պուշկինի «Չմեովա երեկոն» (Խաչիկե Մուրադի) և այլն¹⁴, ինչպես նաև երկու առանձին ժողովածուներ Պուշկինի չափածո և արձակ գործերից (թարգմ. Ջասմե Ջալիլի) և «Նախահեղափոխական ոռոս գրողները մանուկների համար ժողովածուն», որը պարունակում է Կ. Դ. Ուշինսկու, Ի. Ս. Տուրգենևի, Լ. Ն. Տոլստոյի, Վ. Մ. Գարշինի, Դ. Մ. Մամին-Սիբիրյակի, Ա. Պ. Չեխովի գործերը (թարգմ. Է. Բաքուսյանի) և այլն, հրամայական պահանջ ստեղծեցին գեղարվեստական խոսքի մեջ ներառելու բանավոր, առօրյա խոսակցական, բանահյուսական ու խոսքի բարձր սճին պատկանող լեզվական ու ոճական հսկայական գանձերը, այդ ոճերին բնորոշ պատկերավոր, գեղարվեստական մտածելակերպը արտացոլող բազմահարուստ ու բազմաբովանդակ միջոցները և այլն:

Խոսելով գեղարվեստական խոսքի նյութական բազայի մասին՝ անհրաժեշտ է ընդգծել նաև տաղանդի դերը և դրանով պայմանավորված արյուրնալետ ստեղծագործական աշխատանքի բարձր արգասիքները այս ոճի կազմավորման գործում, նրա կայացման ողջ ընթացքում: Մասնավորապես, իրենց տաղանդով, լեզվի ու նրա ոճերի խորը իմացությամբ, նրանց մշակման ու կիրառման վարպետությամբ առանձնանում են բազմաթիվ գլուխգործոց ստեղծագործությունների հեղինակներ, այդ թվում՝ գրող Ա. Շամիլովը՝ «Շվանե քուրդ» և «Դըմղըն»¹⁵ բարձրարժեք գործերով, որոնցից առաջինը պատմվածք է, իսկ երկրորդը՝ պատմավեպ, Ահմադե Սիրազին՝ «Իմ հիշողությունները», Չ. Բաքուն՝ «Ռոժե Բոհորի», Հ. Ջնդին՝ «Հավարի», Իսմաիլե Դուքուն՝ «Ջավաջա Բեդլը», Վազիլե Նադիրին՝ «Ռավա Ժընե», Սիրոյե Ասադը՝ «Սիսե» ու «Մարդար ու Կաբե», Ա. Ավդալը՝ «Գուլիգար» և այլն: Մրանց թվին ավելացնենք նաև մի շարք այլ ստեղծագործողներին, պոեթ հայտնի են իրենց մեծարժեք գործերով մեր պոեզիայի բնագավառում՝ Ասկյարե Բոյիկին, Սաֆյե Իբրյին, Ագիսե Շամսին, Սիբայելե Ռաշիդին, Շկոե Հասունին, Ղաչաղե Մուրադին, Ֆերիկե Ուսուբին, Սմոե Շամոյին և այլն: Հատկանշական է, որ այս քուրդ գրողների ու բանաստեղծների ընդհանուր շարքում նշանակալից տեղ են զբաղեցնում իրենց գեղարվեստական գործերով հայտնի, Հայաստանում քրդական մշակույթի, գրականության զարգացման մասնակից հայ լայնախոսի մտավորականներ՝ շատախցի Հովակիմ Մարգարյանը, որը քրդական միջավայրում հայտնի է եղել նաև Նուրի կամ եր-

բեմն Նորի Հիգանի գրական անուններով, պալ. Մ. Խաչատրյանը, մանկավարժ Մ. Մովսիսյանը, որոնց գրով ստեղծվել են քրդերեն լեզվի քերականությունները, գրողներ՝ Հ. Մկրտչյանը և Հ. Քոչարը. որոնք եղել են «Ռյաթագա» թերթի խմբագիրներ, բանաստեղծներ Սարմենը, Տարոնցը, մանկավարժներ Պետոյանը և Ռ. Դրամբյանը, որոնք Իսահակ Մարագուլովի հետ միասին կազմել են քրդերեն լեզվի դասագրքեր, երկար տարիներ շարունակ աշխատել են «Ռյաթագա» թերթում իբրև թարգմանիչներ, կատարել են գեղարվեստական թարգմանություններ հայ և ռուս գրականություններից, որոնց թվին են պատկանում նաև նրանց քրդերեն լեզվով Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը» և այլ գործերը:

Քրդերեն գրական լեզվի գեղարվեստական ոճին ընդարձակ տեղ է հատկացրել Հայաստանի քրդական մամուլը, որն իր ողջ գոյության ընթացքում եղել է այս ոճի տարածման, մշակման ու պրոպագանդման դրոշակակիրը: Այս ուղղությամբ գոյություն ունեցող առաջընթացի մեջ մեծ ավանդ ունի քրդական «Ռյաթագա» թերթը, որի էջերից մեկը մշտապես ծառայել է այդ ոճի ներկայացմանը, ավելին՝ վերջին տարիներին թերթը ձգտում է շրջանառության մեջ ներառել և լայն հրապարակ հանել այս ոճի դրվածքի ու քրդական միջնադարյան դասական գրականության առնչությունները, նրանց փոխհարաբերություններն ու որոշակի օրգանական կապը:

Թերթը պարբերաբար լուսաբանում է միջնադարյան գրականության ներկայացուցիչների արժեքավոր ստեղծագործությունները, այդ թվում՝ Ահմադե Խանիի, Մալեե Ջզիրի, Ֆակիե Տայրայի, Ալի Հարիրի, Փարթավ բեկ Հակիարի և շատ ու շատ այլ դասականների ստեղծագործությունները, մատչելի դարձնելով նրանց այսօրվա հեղինակների և ընթերցողների լայն շրջանակների համար: Եվս մեկ քայլ գեղարվեստական ոճի զարգացման ճանապարհին հանդիսացավ «Ռյաթագա» թերթին կից ու նրա նախաձեռնությամբ ստեղծված տեղմիմարանական կոմիտեն¹⁶, որի շնորհիվ լեզվական ու լեզվաշինարարական որոշակի աշխատանք կատարվեց: Նշենք նաև քրդագետ լեզվաբանների որոշ ծառայությունները այս ոճի լեզվամշտության հարստացման ճանապարհին, մասնավորապես, մահացած, հնացած, շրջանառությունից դուրս եկած, եթե ոչ հազարավոր, ապա հարյուրավոր բառերի վերականգնմանը վերաբերող օրինաչափությունների բացահայտման ուղղությամբ¹⁷: Գրական լեզվի գեղարվեստական ոճը այսօրվա դրությամբ զարգանում, աճում ու կիրառություն է գտնում հիմնականում իր գոյության չորս ձևերում, որոնց թվին են պատկանում.

1. Լիրիկական ստեղծագործության ենթաժանր,
2. Էպիկական ստեղծագործության ենթաժանր,
3. Էպիկական-լիրիկական ստեղծագործության ենթաժանր
4. դրամատիկական ստեղծագործության ենթաժանր:

(Պետք է նշել, որ գիտական գրականության մեջ սովորաբար այս ձևերը կոչվում են գեղարվեստական ոճի սեռեր, սակայն մեզ թվում է, որ «ենթաժանր»

տերմինը ավելի տեղին է, նկատի ունենալով. որ մենք խոսքի տվյալ տեսակը ոճ ենք անվանում):

Այս չորս ենթառճեղով ներկայացվող հարուստ գրականությունը լայնորեն արտացոլում է լեզվի երեք նյութական բնագավառների՝ բառային կազմի, դարձվածաբանության ու պարենիտոլոգիայի հարուստ շերտերը, մեծապես պարունակում է բարբառային նյութեր, ինչպես նաև մեծ քանակությամբ բառեր ու ոճական արտահայտություններ տարբեր երկրներում լույս տեսնող քրդական գրականությունից ու մամուլից:

ASAN DRBOYAN

ON THE FORMATION OF LITERARY STYLE
OF KURDISH LANGUAGE IN ARMENIA

(Summary)

The developing Kurdish language which is based on the dialectal Kurdish, spoken by Kurdish population of Armenia, has acquired various opportunities for the formation of following four styles: public speech, official, scientific and literary. By this four styles Kurdish literature and press are being edited. The main problems concerning the conditions, contributing to the enrichment and realization of the literary style, are touched upon in this article.

As a result of the study it becomes clear that nowadays this style develops, enlarges and finds its appliance in the following four types of existence, namely, in Lyric, Epic, Epic-Lyric and Dramatic substyles.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գրական քրդերենի հիշյալ չորս ոճերի առաջին նկարագրությունը տե՛ս Մաքսիմն Խամո, Քրդերեն լեզու, գրականություն, Երևան, «Լույս», 1999, էջ 165-190:
2. «Այնարկ Մովսեսյան Հայաստանի քրդական գրականության», ՀՄՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1970, էջ 76:
3. Հովհաննես Թումանյան, «Գիքոր», թարգմ. Ա. Ավդալ, Հ. Ջնդի, Երևան, 1932: «Անուշ», թարգմ. Ռ. Դրամբյան, Երևան, 1934, էջ 64:
4. Մ. Նալբանդյան «Ազատություն», թարգմ. Հ. Ջնդի, «Ռ-յա թագա», 1969, N 18:
5. Մ. Նալբանդյան, «Մանկության օրեր», թարգմ. Մ. Ասադի, «Ռ-յա թագա» 1979, N 23:
6. Հակոբ Հակոբյան, «Մեկ էլ մեկ էր», թարգմ. Ռ. Դրամբյանի, «Ռ-յա թագա», 1936, N 50:
7. Եղիշե Չարենց, «Լենինն ու Ալին», թարգմ. Սիբանիլե Ռաշիդ և Սաիդե Իբո, «Ռ-յա թագա», 1956, N 25:

8. Հմ. Միրաս, «Ասմար», «Կյանքի կարոտ», թարգմ. Ա. Ավդալ, Ջարդոնն Գենջո, «Լաթիֆ», Երևան 1936:
9. Հրաչյա Քոչար, «Խաջե», թարգմ. Հ. Ջնդի, «Ռյա քազա», 1933 N16:
10. Սարմեն, «Լաթիֆ», թարգմ. Հ. Ջնդի, «Ռյա քազա», 1936, N21:
11. Ավ. Իսահակյան, «Քուրդ Ամոն», Երևան, հայպետհրատ 1955, էջ 68:
12. Դ. Դեմիրճյան, «Արդուլ», թարգմ. Ա. Ավդալի, Երևան, 1986:
13. Հ. Դազարյան, «Քուրդ Ամոնի պատմությունը», թարգմ. Հ. Ջնդի, Երևան. 1987, էջ 225:
14. Մովսեսական Հայաստանի քրդերը. Մատենագիտություն (1920-1980), կազմեց Ջալիլ Ջալիլը, Երևան, 1987:
15. Ա. Շամիլով, «Դընդըմ», «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1966:
16. Տերմինաբանական կոմիտեն ստեղծվեց 1989թ.:
17. Մաքսիմն Խամո, Քրդերեն լեզու, գրականություն. Երևան, «Լույս», 1999, էջ 198: